

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԱՆՍՏՐՈՅ ԿԱՅՍԵՐ ԵՒ ԿԱՅՍՐՈՒՀՈՅ Ի ԴԱՄԲԱՆ ԴՍՏԵՐՆ.

Ազգային օրագիրներէն իմացած են մեր ընթերցողք Աւստրիոյ կայսեր նորածին աղջկանը յանկարծական մահը. մէք հոս բազապսակ ծնողացը անոր դամբանին վրայ ըրած այցելութիւնը պատմենք :

Աւստրիոյ կայսերական ցեղին գերեզմանատեղին Վեդարաւոր ըսուած կրօնաւորաց (քափուչին) եկեղեցւոյն տակն է : Կայսրն ու կայսրուհին Լուքսեմպուրկի պալատէն ելան ծպտեալ եկան ու այն գետնափոր մահազեկոյց բնակարանն իշանուր հանգչին շիջեալ փառք, մեծուրիւնք եւ ունայնութիւնք աշխարհի. եւ իրենց այս ծննդատեղի գրոյն եւ այցելութեանը վկայ ջահակիր լուսատու ծերունի վեդարաւոր կրօնաւոր մը միայն ունէին : Երկար ժամանակ վաղամեռիկ գաւակնուն դազաղին վրայ ընկած լացին ու աղօթեցին. կայսրուհին կրփափաքեր գէթ վերջին անգամ մըն ալ իր սիրելի դեռաբողբոջ դստրիկը տեսնել... մայրենի սիրոյն սաստկութեամբն անոր երկաթազամ պղնձապատ տապանը բափանցել մտնել եւ... բայց անկարելի... :

Տեսնելու արժանի տեսարան էր այն երկրիս ընդերացը մէջ շինուած ու ստուարակարկատ կամարներով պատած շիրիմները, ջահին բոցը որ ախրագին Մարիամ Թերեզա կայսրուհւոյն եւ Յովսէփ Բ կայսեր գերեզմանացը վրայ աղօտալոյս կըզարներ, բոկոտն քրճագգեաց կրօնաւորը որ լոխի մնջիկ ու զարմացմամբ կընայէր երկրիս բազաւորին վրայ որ երկնից բազաւորին անդարձ ու անիմանալի վճռոյն առջեւը խոնարհած ընկած ցաւազին՝ ամուսնոյն բափած աղի արցունքները կըտեսներ, սիրտը եւս քան զեւս կըճմէր ու ճար մը չէր կարող գտնել... : Երէ հոն նոյն միջոցին ճարտարահան նկարիչ մը գտնուէր, ո՞ր գիտէ ինչ սքանչելի ու սրտաշարժ պատկեր մը կընկարէր :

Եկածներնուն պէս մինակուկ առանց մէկ ուղեկցի դարձան գնացին լի ցաւօք եւ տրտմութեամբ իրենց բնակարանը, ուր այս կարեւոր հարուածէն ի վեր առանձնացած են՝ հեռի յամենայն զուարճութեանց եւ ի գրօսանաց :

ԼՈՆՏՐԱՅԻ ԵՐԿՈՒ ԳԼԽԱՌՈՐ ՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐԸ.

Անցեալ տարի Լոնտրայի երկու գլխաւոր վաճառանոցներուն մէջ ծախուեր են 1,756,000 մորթած հաւ, այսինքն 1,266,000 Լէտընհօլ (Leadenhall) ըսուած վաճառանոցը, եւ 490,000 Նիւլկէք (New-

gate) ըսուածը. եւ 60,000 ողջ հաւ, 45,000 առաջնոյն, եւ 15,000 երկրորդին մէջ. 1,002,000 մորթած սագ (գազ), 888,000 Լէտընհօլ, եւ 114,000 Նիւլկէք. 383,000 մորթած բաղ (էօրտէք), 255,000 Լէտընհօլ, եւ 148,000 Նիւլկէք. 40,000 ողջ բաղ՝ իւրաքանչիւր վաճառանոցին մէջ 20,000. 124,000 մորթած հնդկահաւ, 69,000 Լէտընհօլ եւ 55,000 Նիւլկէք. որով բոլորը կընեն 5,565,000 հաւեղէն, որոց 2,523,000ը Լէտընհօլ վաճառուեր են, 842,000 ալ Նիւլկէք :

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

Լոնտրայի մէջ 1856ին ծնան 86,853 տղայք, եւ մեռան 56,786 հոգի. ըսել է թէ օրը 238 կամ ժամը 10 հոգի ծներ, եւ օրը 155 հոգի կամ ժամը 7 հոգի մեռեր են : Հաշուեր են նաեւ որ տարին գրեթէ 500 հոգի Թէյմս գետին մէջ ինքնակամ իրենք զիրենք կըխողեն, եւ 5 հոգւոյ մէկը հիւանդանոցներու մէջ կըմեռնի :

— Նանսի քաղաքին 3038 ըսուած օրագրոյն մէջ ալ հետագայ զուարճալի վիճակագրութիւնը կըկարդանք :

Գաղղիոյ արեւելեան կողմի երկաթուղին ունի 475 շոգեկառք, 424 ածխարան, 9000 կառք ու բեռնակառք, որոց համար 70 միլիոն ֆրանք գնացեր է :

Թէ որ այս շոգեկառքերը, կառքերն ու բեռնակառքը քովէ քով շարելու ըլլանք, 65 հազարմերք տեղ կըբռնեն :

475 շոգեկառքը 100,000 ձիու եւ կամ 1,200,000 զօրաւոր մարդու ոյժ ունին :

1856ին այս շոգեկառքերը, կառքերն ու բեռնակառքերը 150 միլիոն տեղ քալեր են որ երկրիս արեւէն ունեցած հեռաւորութեանը չափ է : Շոգեկառքերը մինակ 10 միլիոն հազարմերք տեղ քալեր են, որ 50 անգամ երկրիս լուսնէն ունեցած հեռաւորութեանը հաւասար է :

Միջին համեմատութեամբ երկրի վրայ տարին մէկ միլիոն խորանարդ մերք անձրեւ կուգայ որ ճիշդ այս շոգեկառաց մէջ գործածուած ջրոյն չափն է :

Թէ որ Սքրազպուրկի երկաթուղւոյն կայարանէն՝ մինչեւ Փարիզու երկաթուղւոյն կայարանը — որ իրարմէ 465 հազարմերք հեռու են — նոյն

կայարաններու լայնութեամբն ու բարձրութեամբը հանքային ածուխ լեցընենք, հաւասար կըլլայ այս շոգեկառաց մէջ տարին վառուած ածուխին :

ԿԵՐՊԱՐԱՆՔԸ ԼՈՒՍԱՆԿԱՐԵԼ ՈՒՋՈՂ ԶԻՆՈՒՈՐ ՄԸ.

Անցեալ օր ձիաւոր զօրաց մէկը հագուած կապուած՝ եօրներորդ դասիկոնը բնակող լուսանրկարի մը գործարանը կերթայ որ կերպարանքը հանել տայ :

— Նստե՛, կըսէ, լուսանկարը. գլուխդ վեր բռնէ, ձեռուրներդ ամփոփէ, գործիքին ձերմակ կետին վրայ նայէ, երեսդ շատ մի կախեր, քիչ մը ժպտելու պէս ըրէ, ծնկուրներդ շատ մ'երկընցընէր...

Այն միջոցին զինուորին միտքը կուգայ որ ձին ալ մէկտեղ նկարել տայ :

— Թողութիւն կընես, Պարոն, կըսէ. միտքս փոխեցի, ձիոյս վրայ կուգեմ որ զիս քաշես :

— Այս ալ գէշ չէ, կըսէ ինքն իրեն լուսանրկարը. եւ զինուորին դառնալով « Հրամանքդ ալ, Պարոն, այն բեւը կտրած զինուորին կընամանիս որ մէկալ օր եկեր ոտք կըկոխէր որ երկու բեւն ալ ամբողջ հանեմ : Գիտցիր որ լուսանկարը տեսածը միայն կրնայ հանել :

— Բայց ձիս կրնաս տեսնել, որովհետեւ վարը դուրը կեցած է :

— Պետք էր վեր բերէիր, կըսէ լուսանկարը ժպտելով :

— Հասկըցայ, հասկըցայ կըպատասխանէ զինուորը, որ քու բանդ չէ եղեր. պետք էր մէկէն ըսէիր որ ձի շինել չես գիտեր : Հարիւրապետես խնդրեմ որ քեզմէ ճարտար արուեստաւոր մը ինծի ցուցընէ, կըսէ. եւ ուսերը քօթուելով դուրս կեցէ :

ԱՐԵՍՆ ՊԱԿԱՍՈՒԹԻՅՆԸ ԼԵՅՐՆԵԼՈՒ ՀՆԱՐՔ.

Մօտերս Սաքսոնիա Վայմարի մեծ դքսութեան Ենա քաղաքին մէջ հետաքրքրական բժշկութիւն մը եղած է, զոր արժան կըհամարիմք մեր ընթերցողաց հաղորդել : Նոր գիւտ մը գտնուած է որ արիւնհոսութեամբ կամ ուրիշ ո՞ր եւ իցէ պատճառով արիւնը հատած մարդոյն երակները կըբանան եւ առողջ արիւնոտ մարդու մը բացուած երակներու հետ կըհաղորդեն : Ամսոյս 20ին Մարքէն անունով ճարտար բժիշկը բոլորովին անարիւն մնացած մանկամարդ կնոջ մը վրայ ասոր փորձն ընելով՝ մահուրէն ազատեր է զայն : Իր աշակերտներէն մէկը սիրով իր երակներուն արիւնը այս գեղեցիկ փորձին նուրիներ է. եւ իր

անձնանուէր մարդասիրութեանը կենսատու պըտուողը տեսնելով ուրախացեր է :

ԶԻՈՒ ՄԸ ԻՐ ՏԻՐՈՋԸ ՎՐԱՅ ՈՒՆԵՑԱՄ ՍԷՐԸ.

Զիաւոր զինուորին մէկը որ իր քսանամեայ ծառայութեանը մէջ տասնըվեց տարի միակերպ նոյն ձիոյն վրայ հեծեր ու շատ պատերազմներու մէջ գտնուեր էր, այս տարի փետրուարի 20ին զինուորութենէ կազատի եւ ձին ուրիշի մը կըտրուի : Ազնիւ կենդանին այնչափ առջի տիրոջը հետ վարժեր ու վրան սէր կապեր է եղեր, որ կարելի չէ եղած անոր կորստեան ցաւը մոռնալ, եւ ուրիշի հետ վարժիլ : Օրերով ամենեւին բան չէ ուզած բերանն առնուլ, եւ մարտի 2ին մեռեր է : Այսպիսի տիրասիրութեան օրինակ մարդկանց մէջ ամենաքիչ կըգտնուի, բոլր քէ կենդանեաց մէջ :

ԽԱՐԳԱՒՈՒԹԻՒՆ ՇԱՔԱՐԻ.

Այս օրերս Գերմանիոյ քաղաքներէն մէկուն մէջ գործաւորին մէկը 10 լիտր ծեծած շաքար կըգնէ, եւ ուշադրութեամբ դիտելով կընայի որ մանրավաճառը (պագգայ) մէջը լիտր մը կիր (քիրեճ) խառներ է : Շուտ մը մէկէն օրագիրը ղենել կուտայ քէ այն մանրավաճառն որ 10 լիտրի վրայ մէկ լիտր կիր խառնեց տուաւ ինծի՝ քէ որ խարդախած լիտրը չխրկէ, գիտցած ըլլայ որ անունովն ու տեղովը այս օրագրով պիտի հրատարակեմ :

Երկրորդ առաւօտ գործաւորը մէկ լիտրի տեղ 9 լիտր ծեծած շաքար կընդունի. վասն զի այլ եւ այլ մանրավաճառներ որ նոյն խարդախութիւնն ըրեր էին, վախերնէն որ յանցանքին դուրս չեցէ, մէկ մէկ լիտր շաքար զրկեր էին :

ՄԵՂՈՒԻ ԽԱՅՈՒԱՅԻՆ ԴԷՄ ԴԵՂ.

Մեղուի, իշամեղուի, բրետի, պիծակի խածուածքին դեմ ամենադիւրին եւ շատ զօրաւոր զեղ է քափուրի (քեաֆիրի) ու սպիտակադեղի (լուսիւպեճ) բաղադրութիւնը, եւ որպէս զի քափուրը չցնդի, պետք է որ այս բաղադրութիւնը զոց տփիկի մը մէջ պահուի :

Propriétaire-gérant : A. LACHAT

Ի ՓԱՐԻՉ, Ի ՏՊԱՐԱՆԻՆ ԱՐԱՄԵԱՆ.